

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/3

2 հուլիսի 2013 թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով <Վարգոս> ԲԲԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 31.05.2013 թ-ի թիվ 1422443 վարչական ակտով առաջադրված տուգանքի չափի դեմ բերված 17.06.2013 թ-ի դիմում-գանգատը և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

<Վարգոս> ԲԲԸ նկատմամբ 31.05.2013 թ-ին ընդունվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ թիվ 1422443 վարչական ակտը, որով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ պարբերության պահանջները խախտելու համար կիրառվել է նույն օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 504.000 դրամ:

<Վարգոս> ԲԲԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 31.05.2013 թ-ի թիվ 1422443 վարչական ակտով առաջադրված տուգանքի դեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե բերվել է 17.06.2013 թ-ի դիմում-գանգատը: Մասնավորապես, ըստ <Վարգոս> ԲԲԸ դիմում-գանգատի, վերոգրյալ վարչական ակտով առաջադրված տուգանքի չափը պետք է կազմի ոչ թե 504.000 դրամ, այլ՝ 252.000 դրամ:

Որից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 28.06.2013 թ-ի թիվ 77 գրությամբ <Վարգոս> ԲԲԸ կողմից բերվել է միջնորդություն, որով ընկերությունը խնդրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 31.05.2013 թ-ի թիվ 1422443 վարչական ակտի դեմ բերված 17.06.2013 թ-ի դիմում-գանգատը թողնել առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ <Վարգոս> ԲԲԸ դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

<Վարգոս> ԲԲԸ 17.06.2013 թ-ի դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ